

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 27 » սեպտեմբերի 2014 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԽԹԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը (այսուհետ՝ ԳՊՄԻ) աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խրախուսման համար հավելավճարի տրամադրումը իրականացվում է սույն ընթացակարգով:

ԳՊՄԻ-ի աշխատակիցների հավելավճարը գոյանում է յուրաքանչյուր տարվա համար կուտակած միավորներին համապատասխան /շնորհվող միավորները՝ ըստ Հավելվածի/:

Յուրաքանչյուր տարեվերջին առանձին աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքները և կուտակած միավորների հաշվարկը՝ համապատասխան հիմքերով, առանձին փաթեթով ամբիոնի վարիչի կողմից ներկայացվում է գիտության և արտաքին կապերի բաժին (ըստ Հավելվածի):

Գիտության և արտաքին կապերի բաժինը հիմքերի ուսումնասիրությունից հետո փաթեթը ներկայացնում է ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովին, որն էլ ուսումնասիրում է հավելավճարի տրամադրման հիմքերը: Ըստ անհրաժեշտության փաթեթը կարող է վերադարձվել ամբիոնին՝ վերանայման:

Հանձնաժողովի կայացրած որոշման հիման վրա ռեկտորը տալիս է հրաման դասախոսների հավելավճարի վճարման վերաբերյալ:

Գնահաշվարկ ըստ գործունեության տեսակի գումարը սահմանել առանց հարկային պահումների:

Ուժը կորցրած համարել 23. 04. 2014թ. ընդունված «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու դասախոսի հավելավճարի տարբերակված համակարգ» կարգը:

Հավելված

Գործունեության տեսակ		Գումարի չափը (ՀՀ դրամ)
1.	Impact Factor վարկանիշով օժտված միջազգային գիտական ամսագրում հոդված	50 000
2.	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	35 000
3.	ԳՊՄԻ-ի Գիտական տեղեկագրում հրատարակված գիտական հոդված	25 000
4.	ՀՀ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	20 000
5.	ՀՀ և արտասահմանյան ԳԱԱ ցուցակում ընդգրկված միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հրատարակված գիտական հոդված	20 000
6.	Միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հրատարակված գիտական հոդված (միջազգային լեզու, միջազգային հանձնաժողով)	20 000
7.	ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից թույլատրված գիտամեթոդական աշխատանք	1 մամուլը՝ 3000
8.	ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից թույլատրված գիտական մենագրություն	1 մամուլը՝ 4000
9.	Գիտական գյուտի պետական հեղինակային վկայագիր	10 000
10.	Միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ	25 000
11.	Միջազգային պաշտոնական կառույցների կողմից կազմակերպված ցուցահանդեսի ծրագրում ընդգրկվածություն և մասնակցություն (կերպարվեստ, քանդակագործություն, երաժշտական գործ)	20 000

Միավորները հաշվելու համար անհրաժեշտ է ներկայացնել գործունեությունը հաստատող փաստաթղթի բնօրինակը և կրկնօրինակը (բնօրինակը հետ է վերադարձվում):